

Նախատեսվում է մարզում առանձնացնել և թիրախավորել շուրջ 30 զբոսաշրջային տարածք. Սյունիքի մարզպետ

Vesti.am-ը գրուցել է Սյունիքի մարզպետ **Վահե Հակոբյանի** հետ:

-Պարո՛ն մարզպետ, 2017 թվականի ընթացքում մարզպետարանն ի՞նչ աշխատանքներ է իրականացրել զբոսաշրջության ոլորտում: Իրականացված աշխատանքներն ինչպե՛ս եք գնահատում:

Պետք է նշենք, որ ՀՀ Սյունիքի մարզպետարանը 2017 թվականի ընթացքում զբոսաշրջության զարգացման ուղղությամբ ձեռնարկել է մի շարք քայլեր: Կցանկանայինք, նախևառաջ առանձնացնել Կապանի օդանավակայանի վերագործարկման աշխատանքների մեկնարկը, որոնք, ի դեպ, ավարտին կհասցվեն 2018 թվականի ամռանը: Ակնհայտ է, որ օդանավակայանի առկայությունը զգալիորեն կնպաստի զբոսաշրջության ակտիվությանը Սյունիքի մարզում: Այսօր Երևանից Կապան ուղևորությունը թե՛ տևողության, և թե՛ ճանապարհի բարդության տեսակետից նվազեցնում է զբոսաշրջիկների հետաքրքրությունը մեր մարզի հանդեպ, այնինչ շուտով այդ ճանապարհը կհաղթահարվի ընդամենը 30 րոպեում, ինչը, վստահաբար, կստեղծի աննախադեպ շահավետ պայմաններ մարզում տուրիզմի զարգացման համար: Նշենք նաև, որ 2017 թվականին իմ առաջարկությամբ և ՀՀ Կառավարության որոշմամբ Սյունիքի մարզպետարանի կառուցվածքում կատարվել են փոփոխություններ, որով մարզպետարանի կառուցվածքում ստեղծվել է Միջազգային համագործակցության և զբոսաշրջության զարգացման առանձին ստորաբաժանում: Ստեղծված են նաև նպաստավոր պայմաններ մասնավոր ներդրողների համար և ուրախությամբ պետք է արձանագրենք, որ արդեն ներկայացվել են մի շարք ներդրումային ծրագրեր, ինչպիսիք են, օրինակ, մարզում առաջին զիպլայնի նախագիծը, էկո գյուղերի ստեղծումը, ինչպես նաև աշխարհում լայն տարածում ունեցող «Bad and breakfast» հյուրընկալման ֆորմատի զարգացումը մարզում: 2018 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, նախատեսվում է մարզում առանձնացնել և թիրախավորել շուրջ 30 զբոսաշրջային տարածք:

-Մարզպետարանն առաջիկայում զարգացման ի՞նչ ծրագրեր է նախատեսում:

Կապանում «Իտալիան Ֆուդ Քամփնի» ՍՊԸ-ի ջանքերով արդեն գործում է իտալական պիցցայի արտադրամասը: Կիսաֆաբրիկատ պիցցան պատրաստվում է տեղական արտադրության մթերքներից և նախապատվությունը տրվում է Սյունիքի արտադրողներին: Գործարանում արդեն ստեղծված է 10 աշխատատեղ, 2018թ. նախատեսվում է ունենալ մոտ 70 աշխատատեղ՝ կախված արտադրության ծավալներից: Ծրագրի իրականացման համար ներդրվել է շուրջ 500 հազ ԱՄՆ դոլար, սարքավորումները ներկրվել են Իտալիայից:

2018թ. մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրում կսկսի աշխատել ևս մեկ գործարան՝ մոտ 500.000 ԱՄՆ դոլար ներդրումային արժողությամբ տրիկոտաժի ֆաբրիկան, որը ապահովելու է 100 աշխատատեղ, իսկ արտադրանքն արտահանվելու է Ուկրաինա:

Կապանի օդանավակայանի վերաշահագործման գործընթացներում 2018թ. նախատեսվում է շուրջ 3 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, որն իրականացվելու է «Սյունիքի զարգացման և ներդրման» հիմնադրամի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ միջոցներով: Արդյունքում նախատեսվում է ունենալ ևս 15-25 աշխատատեղ:

Սյունիքի մարզպետարանը ձեռք է բերել GIS (Աշխարհագրական երկրատեղեկատվական համակարգ) լիցենզիաներ, որից 8-ը նախատեսում ենք տրամադրել մարզի խոշորացված համայնքներին՝ ենթակառուցվածքների և տնտեսության էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքների իրականացման համար՝ ստեղծելով թվային կառավարման միասնական համակարգ մարզպետարանի և համայնքապետարանների միջև:

- Մարզում քանի՞ համայնք ընդգրկվեց խոշորացման ծրագրում և դա ի՞նչ արդյունք տվեց:

Դեռևս 1995 թվականի նոյեմբերի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Սյունիքի մարզն իր կազմավորման փուլում ուներ 113 համայնք և 135 բնակավայր: Այնուհետև մարզի համայնքների և բնակավայրերի ցանկերում կատարվեցին ճշգրտումներ, և համայնքների ու բնակավայրերի թիվը մինչև խոշորացման գործընթացի մեկնարկը, համապատասխանաբար կազմում էր 109 և 134, և Սյունիքի մարզը, չնայած Հանրապետությունում հիմնականում կիրառված «մեկ բնակավայր, մեկ համայնք» սկզբունքին, ուներ 10 բազմաբնակավայր գյուղական համայնքներ (Գեղանուշ, Գեղի, Դարբաս, Լեռնաձոր, Ծավ, Նժդեհ, Նոր Աստղաբերդ, Շուռնուխ, Սյունիք, Վարդանիձոր):

2016 թվականին Սյունիքի մարզում 2 փուլերով տեղի ունեցավ համայնքների խոշորացում:

Խոշորացման 1-ին փուլի ժամանակ, 2016 թվականի փետրվարին, Տաթևի խմբում ստեղծվեց 8 գյուղական բնակավայր ընդգրկող Տաթև համայնքը: Տաթևի խոշորացման ծրագրից հետո Սյունիքի համայնքների թիվը 109-ից դարձավ 102:

Խոշորացման 2-րդ փուլում, 2016 թվականի սեպտեմբերին մարզում ստեղծվեցին ևս 4 խոշորացված բազմաբնակավայր համայնքներ՝ Գորայք, Գորիս, Մեղրի և Տեղ համայնքները: Խոշորացման 2-րդ փուլից հետո Սյունիքի համայնքների թիվը 102-ից դարձավ 72:

2017 թվականի նոյեմբերին Սյունիքի մարզում տեղի ունեցավ խոշորացման 3-րդ փուլը, որի ժամանակ խոշորացվեցին մարզի 67 համայնքներ, և խոշորացման արդյունքում ստեղծվեցին Կապան, Սիսիան և Քաջարան բազմաբնակավայր

համայնքները: Խոշորացման 3-րդ փուլից հետո Սյունիքի համայնքների թիվը 72-ից դարձավ 8:

Այսպիսով՝ խոշորացման 3 փուլերի ավարտից հետո Սյունիքի մարզում ունենք 8 բազմաբնակավայր հետևյալ համայնքները՝ Գորայք, Գորիս, Կապան, Մեղրի, Սիսիան, Տաթև, Տեղ և Քաջարան ու այդ համայնքների մեջ համապատասխանաբար ընդգրկված 138 բնակավայրեր:

Ըստ բնակչության թվաքանակի և բնակավայրերի, մարզի բազմաբնակավայր համայնքներում ունենք հետևյալ պատկերը.

Գորայք՝ 1843 բնակիչ, 4 գյուղական բնակավայր, կենտրոնը՝ գյուղ Գորայք,
Գորիս՝ 29539 բնակիչ, 13 բնակավայր, որից 1-ը քաղաքային, կենտրոնը՝ քաղաք Գորիս,

Կապան՝ 45184 բնակիչ, 38 բնակավայր, որից 1-ը քաղաքային, կենտրոնը՝ քաղաք Կապան,

Մեղրի՝ 11732 բնակիչ, 15 բնակավայր, որից 2-ը քաղաքային, կենտրոնը՝ քաղաք Մեղրի,

Սիսիան՝ 30610 բնակիչ, 32 բնակավայր, 2-ը քաղաքային, կենտրոնը՝ Սիսիան քաղաք,

Տաթև՝ 6144 բնակիչ, 8 գյուղական բնակավայր, կենտրոնը՝ գյուղ Շինուհայր,

Տեղ՝ 5589 բնակիչ, 7 գյուղական բնակավայր, կենտրոնը՝ գյուղ Տեղ,

Քաջարան՝ 8283 բնակիչ, 21 բնակավայր, որից 1-ը քաղաքային, կենտրոնը՝ քաղաք Քաջարան:

Կարծում եմ՝ համայնքների խոշորացման բարեփոխումներն իսկապես օբյեկտիվ և օրինաչափ անհրաժեշտություն էին՝ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումն ապահովելու համար: Դեռևս 2011 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Դրանով իսկ ՀՀ կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են հետևյալ արդյունքների՝ համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքների կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Այնուհետ, համայնքների խոշորացման գործընթացի անհրաժեշտությունը կարևորվեց նաև այլ փաստաթղթերում, մասնավորապես, ՀՀ կառավարության տարեկան ծրագրերում, Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և այլն: Եթե խոսենք մեր մարզում արձանագրված արդյունքների մասին, ապա պետք է ասել, որ դրանք դեռևս մեր սպասած վերջնական արդյունքները չեն, քանի որ խոշորացումը, որպես այդպիսին Սյունիքի մարզում ունի ընդամենը 2 տարվա պատմություն, և այդ ժամանակամիջոցում վերջնական արդյունքների հասնել հնարավոր չէ: Չնայած դրան, առաջին ձեռքբերումներն արդեն գոհացնում են.

Այսպես՝

Սյունիքի մարզում իրականացված խոշորացման գործընթացի այս հանգրվանում արդեն ունենք համայնքների ու բնակավայրերի զարգացումն ապահովելու ուղղությամբ գործելու լայն ճակատ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխությունների արդյունքում օրենսդրորեն ստեղծվել են բավարար երաշխիքներ՝ առավել արդյունավետ, գործուն և կարող տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ ավագանու գործունեության համար: Իհարկե, հետագայում օրենսդրությունն էլ ավելի կհարմարեցվի ընթացող զարգացումներին և կկատարելագործվի, ապահովելով ոլորտի առաջընթացը:

Ստեղծվել են ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ ծախսման հնարավորություններ՝ թույլ տալով առավել շատ միջոցներ ուղղել կապիտալ ծրագրերին ու ծառայություններին, քան վարչական ծախսերին: Մարզում ընդհանուր հաշվով կրճատվել են 494 վարչական գործառույթներ իրականացնող աշխատակիցների հաստիքներ և դրա փոխարեն ավելացել է բնակչությանը ծառայություններ մատուցող անձնակազմերի աշխատակիցների թվաքանակը: Տեղի է ունեցել 171,1 միլիոն դրամի աշխատավարձի ֆոնդի տնտեսում, որն ուղղվել է համայնքներում կապիտալ ծրագրերի իրականացմանը: Փաստորեն, տեղի է ունեցել կառավարման օպտիմալացում և այս ուղղությամբ կատարվող ծախսերի նվազեցում, որը կադրային ներուժի արդյունավետ օգտագործման հնարավորություն է ստեղծել:

Գործընթացին արդեն հաջորդում են սոցիալ-տնտեսական բարեփոխումները: Խոշորացման արդյունքում տնտեսվել են ֆինանսական միջոցներ՝ ենթակառուցվածքների պահպանմանն ուղղելու համար, խոշորացված համայնքներում սկսվել է նոր որակի ենթակառուցվածքներ ստեղծելու գործընթացը, ինչն, իհարկե, պահանջելու է նաև համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայություն:

Վարչատարածքային բարեփոխումների ծրագրի շրջանակներում խոշորացված համայնքներում նախատեսվում է իրականացնել (որոշ համայնքներում արդեն իրականացվում են) ներդրումային ծրագրեր՝ ԱՄՆ ՄՁԳ և Շվեյցարական դաշնային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

Գոհացուցիչ վերջնական արդյունքներին հասնելու համար շարունակելու ենք իրականացնել ներդրումային քաղաքականություն՝ համայնքների, բնակավայրերի բնական ու տնտեսական ներուժն օգտագործելու համար: Շարունակելու ենք հնարավորինս ապակենտրոնացնել բնակչությանը մատուցվող ծառայությունները (առաջնորդվելու ենք այն սկզբունքով, որ ՏԻՄ-երը կարող են մեկ վայրում կենտրոնանալ, իսկ ծառայությունները պետք է ավելի հասանելի լինեն բնակավայրերի բնակչությանը): Մշակելու ենք ծրագրեր՝ սահմանամերձ բնակավայրերում իրագործելու համար և տնտեսական բարեփոխումների միջոցով ամրացնելու ենք երկրի սահմանները:

-Ի՞նչ առաջընթաց եք գրանցել կրթության, գյուղատնտեսության, առողջապահության, աղբահանության ոլորտներում:

Կրթության ոլորտում 2017 թվականին կատարվել են մի շարք կարևոր փոփոխություններ: Մասնավորապես մշակվել է դպրոցներում փաստաթղթաշրջանառության թվայնացման և այդ ոլորտում աշխատանքների կազմակերպումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու ծրագիր: Այն ամբողջությամբ գործարկվել է 2018 թվականի հունվարի 1-ից: Մարզի 112 դպրոցների տնօրենների հետ կազմակերպված և համակարգված աշխատելու համար մարզի քաղաքներում ստեղծվել են 2-3 տնօրենից բաղկացած խորհուրդներ: Պարբերաբար իրականացվել է սովորողների պայուսակների ծավալի և քաշի վերահսկողություն և միջոցներ են ձեռնարկվել դրանք ստանդարտներից համապատասխանեցնելու ուղղությամբ: Դպրոցների ճաշարաններում իրականացվել է դպրոցականներին տրվող սննդի վերահսկողություն, տրվել են հստակ հանձնարարականներ սննդի որակի և անվտանգության ապահովման ուղղությամբ: Սահմանված կարգին համապատասխանեցվել են նաև սովորողների օրական և շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը, որը նույնպես համապատասխանեցվել է թույլատրելի նորմերին: Մարզի 2 դպրոցներում ներդրվել է մասնագիտական կողմնորոշման պիլոտային ծրագիր, որի հաջողության դեպքում այն նախատեսվում է կիրառել մարզի բոլոր խոշոր դպրոցներում: Հաշվի առնելով հանրապետական օլիմպիադաներում, ինչպես նաև այլ մրցաշարերում սյունեցի աշակերտների առաջնային ներգրավվածությունը, այս ոլորտը մշտապես գտնվում է մեր ուշադրության կենտրոնում և 2018 թվականը բարեփոխումների առումով առնվազն չի զիջի նախորդ տարվան:

Առողջապահության ոլորտում 2017 թվականին տեղի են ունեցել կադրային լուրջ փոփոխություններ, ինչպես ղեկավար, այնպես էլ բժշկական կազմում: Մի քանի անգամ ավելացել են բժշկական կենտրոնների դրամարկղային մուտքերը, ինչը հնարավորություն է տվել բժշկական կենտրոնները վերազինել նորագույն սարքավորումներով: Կնքվել են համագործակցության պայմանագրեր Հայաստանի առաջատար բուժ հիմնարկների հետ, ինչի արդյունքում հանրապետության լավագույն մասնագետները հաճախակի գործուղվում են մարզի բուժ հիմնարկներ, ինչը նաև ստեղծում է փորձի փոխանակման ունիկալ պայմաններ: Այս ոլորտում կարևոր ձեռքբերում էր նաև 2017 թվականին Կապանում բացված ժամանակակից ակնաբուժական կենտրոնը:

Խոսելով աղբահանության ոլորտում ձեռ բերված առաջընթացի մասին՝ պետք է նշենք, որ 2017 թվականի ընթացքում մարզպետարանը համայնքների հետ համատեղ կատարել է ծավալուն աշխատանք մարզում աղբահանության դիմաց վճարման պարտավորություն ունեցող անձանց բազաների ճշտման ուղղությամբ, ինչի արդյունքում ֆիզիկական անձանց թիվը զգալիորեն ավելացել է: Տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանագրերի քանակը նույնպես գրանցել է զգալի աճ և այսօր կազմում է թվով շուրջ 1860: Պետք է նաև նշվենք, որ նախորդ տարի մեկնարկել է

աղբատեղերի բարելավման գործընթացը, որն ակտիվորեն շարունակվում է նաև 2018 թվականին:

-Ի՞նչ քայլեր են կատարվել մարզում գյուղատնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ:

Մարզում գյուղատնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ կատարվել են մի շարք քայլեր: Թույլ տվեք ներկայացնել դրանք ըստ բնագավառների.

Դաշտավարության բնագավառ

1. Հացահատիկային և կերային մշակաբույսերի սուպերէլիտա վերարտադրության սերմերի ստացման տնկարանային տնտեսությունների ստեղծում,

2. Ընդեղեն մշակաբույսերի /ոսպ, ոլոռ, սիսեռ, հնդկացորեն/ սերմնաբուծության կազմակերպում.

3. Բերքատվության բարձրացման նպատակով հողի և մշակաբույսերի մշակության նոր տեխնոլոգիաների կիրառում,

4. Նոր ինտենսիվ սորտերի փորձարկում:

Այգեգործություն

Ինտենսիվ այգիների հիմնում՝ 45հա,

Կաթիլային ոռոգում՝ 57հա,

Կարկտապաշտպան այգիներ՝ 23հա,

Ժամանակակից գյուղտեխնիկայի և գործիքների թարմացում լիզինգով և այլ ճանապարհներով:

Անասնապահություն

Տոհմային տնտեսությունների ստեղծում.

Սիսիանում՝ տոհմային կովերի, Կապանում՝ տոհմային այծերի,

Շինշիլայի բուծում, բազմացում,

Բարձր բերքատու մեղվաընտանիքների ներմուծում

-Մարզում որքանով է լուծված գործազրկության հարցը:

Ինչպես արդեն նշեցի, 2017 թվականին մարզում բացվել է իտալական պիցցայի արտադրամաս, որն իր ողջ ծավալով կսկսի գործել 2018 թվականի ընթացքում: Այս արտադրամասի ստեղծումը կարևոր է ոչ միայն անմիջապես արտադրամասում տասնյակ աշխատատեղերի ստեղծման տեսակետից, այլ նաև նրանով, որ ապահովելու է մարզում գյուղատնտեսական ապրանքների (պանիր, լոլիկ, պղպեղ և այլն) աննախադեպ սպառում, ինչը մուլտիպլիկատիվ էֆեկտի շնորհիվ մեծ ազդեցություն է ունենալու մարզի տնտեսական վիճակի վրա: Կրկին նշեցինք, որ 2018թ. Լեռնաձոր բնակավայրում կսկսի գործել տրիկոտաժի ֆաբրիկա, որն ապահովելու է 100 աշխատատեղ: Արդեն գործում է «Սյունիք ֆուդ» ընկերությունը, որի գործարկմամբ ստեղծվել է մոտ 20 հիմնական և 210 սեզոնային աշխատատեղեր: Մոտ երկու շաբաթից բացվելու է Կապանի կինոթատրոնը, որն ամենից բացի նույնպես կստեղծի հավելյալ աշխատատեղեր: Պետք է նաև նշենք, որ Կապանի օդանավակայանի վերագործարկումը կրկին կստեղծի տասնյակ նոր աշխատատեղեր, ինչպես նաև լուրջ զարկ կտա մարզում կատարվող մասնավոր

ներդրումների աճին և մենք վստահ ենք, որ 2018 թվականը աշխատատեղերի ստեղծման առումով լինելու է էլ ավելի նպաստավոր տարի:

-Վերջերս Մեղրիում բացվեց Ազատ տնտեսական գոտին, որին ներկա էր նաև վարչապետ Կարեն Կարապետյանը: Ի՞նչ նոր հնարավորություններ է այն տալու մարզին և նրա բնակիչներին:

Մեղրիում ազատ տնտեսական գոտու ստեղծումը կարևորվում է հատկապես նրանով, որ այն բացվում է Իրանի հետ սահմանագծին, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների ակտիվացմանը, իրանական կապիտալով ընկերությունների ներգրավմանը՝ ամրապնդելով ներկայումս առկա սերտ համագործակցությունը: Ի տարբերություն ներկայումս գործող երկու ազատ տնտեսական գոտիների, այս ազատ տնտեսական գոտին ունենալու է ոլորտային մեծ ընդգրկվածություն՝ ներառելով գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, զբոսաշրջության և այլ ոլորտները:

Դուայա Ղազարյան